

# Մանրամասն Ծանոթանանք Օնթարիոյի

## ՄՊԱՌՈՂԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

### ՀԵՌԱԶԱՅՆԻ ԵՒ ԻՆՏԵՐՆԵԹԻ ՍԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքային շրջաններու մէջ շատ ծառայութիւններ կան: Նախքան որեւէ պայմանագիր ստորագրելը պետք է ընթերցել եւ հասկնաք ծառայութեան բոլոր մանրամասնութիւնները: Կարող էք դրամ խնայել հետեւեալ ձեւերով:-

- Համախմբել (միացնել) ձեր հեռաձայնի, ինթըրնետի եւ հեռատեսիլի ծառայութիւնները:
- Գնել ընտանեկան ծրագիրներ բջիջային հեռաձայնի ծառայութիւններու համար:
- Օգտագործել հեռադր եւ միջազգային հեռաձայնելու քարդեր:

Եթէ դուք չ'ունիք ձեր տան մէջ ինթըրնետի մուտք, կրնաք:-

- Գործածել անվճար ինթըրնետի ծառայութիւնը ձեր տեղական հանրային գրադարանին մէջ (գրադարանի քարդով):
- Երթալ սրճարաններ եւ ճաշարաններ որոնք կը տրամադրեն անվճար անլար (wireless) մուտք, (նաեւ կը կոչուին Wi-Fi hotspots):

Ասելի գիտնալու համար հեռաձայնի եւ ինթըրնետի ծառայութիւններու մասին, այցելեցէք [www.settlement.org](http://www.settlement.org) կամ [findlink.at/dailylife](http://findlink.at/dailylife):

### ԳԱՆԱՏԱ ՓՈՍԹ

- Կարող էք դրկել եւ ստանալ ծրարներ Գանատա փոսթի մանրածախ խանութներու (retail stores) միջոցաւ, բոլոր քաղաքներու եւ գիւղաքաղաքներու մէջ:
- Կարող էք հաշուային վճարումները կատարել առցանց (online) Գանատայի էլեկտրոնային փոսթի (e-post) ծառայութեամբ:
- Յաւելեալ տեղեկութիւններու համար ուրիշ արտադրանքներու եւ ծառայութիւններու մասին, այցելեցէք [www.canadapost.ca](http://www.canadapost.ca) կամ հեռաձայնեցէք 1-866-607-6301:

### ՌԻՏԵԼԻԲ ԳՆԵԼ

Կրնաք ուտելիք գնել հետեւեալ տեղերէն:-

- Նպարեղէնի խանութներ եւ սուպերմարքեթներ:
- Յարմարութեան խանութներ (convenience stores) (կամ “անկիւնի խանութներ - corner stores”): Ուտելիքը այս խանութներուն մէջ աւելի սուղ է:
- Պտուղի եւ բանջարեղէնի փոքր շուկաներ:
- Մսավաճառներ եւ հացի փուտեր:

### Կարեւոր նշում

Օնթարիո ռուս տեղական սննդային դրամատուներ որտեղ ֆինանսական դժուարութեան մէջ եղող մարդիկ կրնան անվճար նպարեղէն ստանալ:

Հեռաձայնեցէք 1-866-220-4022 կամ այցելեցէք Ontario Association of Food Banks: [www.oafb.ca](http://www.oafb.ca) կամ <http://findlink.at/Foodbanks>


### ՓՈՔՐԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՈՒԷՐ (ԹԷՅՄՎՃԱՐ)

Եթէ զգացիք թէ լաւ ծառայութիւն ստացաք ճաշարանի կամ թաքսիի մէջ, թէյավճար տալու ընտրանքը ունիք: Ան սովորաբար հաշիւին 10-15 % տոկոսն է: Թէյավճարը պարտադիր չէ:

### ՄՊԱՌՈՂԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Իբր սպառող, դուք պաշտպանուած էք սպառողի պաշտպանութեան օրէնքի կողմէ: Յաւելեալ տեղեկութիւններու համար, հաճեցէք այցելել [www.ontario.ca](http://www.ontario.ca) կամ [findlink.at/consrights](http://findlink.at/consrights):

1-855-626-0002  
[www.orientationontario.ca](http://www.orientationontario.ca)



## Սպառողի պաշտպանություն

Մենք բոլորս դեր ունինք սպառողի պաշտպանության մեջ: Կառավարությունը կը դնէ օրէնքներ՝ պաշտպանելու սպառողները, եւ ընկերությունները պետք է հետեւին օրէնքներուն՝ պաշտպանելու յաճախորդները եւ պաշտօնեաներու տեղեկությունները: Ամենայն դեպս, ամէն մարդ Գանատայի մէջ պետք է քայլեր առնէ ինքզինքը պաշտպանելու:

- Սպառողական գործերու գրասենեակը (Office of Consumer Affairs) կը ներկայացնէ տեղեկություններ շատ մը սպառողի պաշտպանության նիւթերու մասին [www.consumerinformation.ca](http://www.consumerinformation.ca)
- Գանատական հակա-խարդախութեան կեդրոնը (Canadian Anti-Fraud Centre) կը հաւաքէ եւ կը բաժնէ տեղեկություն սպառողի խարդախութեան մասին [www.antifraudcentre-centreantifraude.ca](http://www.antifraudcentre-centreantifraude.ca)

## ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԳՈՂՈՒԹԻՒՆ

Ինքնութեան գողությունը կը նշանակէ երբ անձ մը կը գործածէ ձեր անձնական տեղեկությունները առանց ձեր արտօնութեան, յանցագործութիւն կատարելու: Ինքնութեան գողերը կարող են ձեր ինքնութիւնը գործածել ձեր դրամը գողնալու կամ ձեր վարկային քարդը (credit card) գործածելու գնուճներ ընելու: Անոնք կարող են նաեւ ձեր ինքնութիւնը գործածել ուրիշ յանցագործութիւններ կատարելու ձեր անունով:

Շատ կարելու է պահպանել հետեւեալ տեղեկությունները եւ փաստաթուղթերը:-

- Հասարակական ապահովագրութեան թիւ
- Վարորդի արտօնագրի թիւ
- Առողջութեան քարդի թիւ
- Վարկային քարդը եւ դրամատան տեղեկություններ
- Դրամատան քարդ
- Ծննդեան վկայական
- Անցագիր
- Վիզա եւ ուսման արտօնագիր

Կան շատ ձեւեր, որ գողերը կարող են ձեր ինքնութիւնը գողնալ: Անոնք կարող են ձեր փոստարկղէն նամակ առնել կամ գողնալ ձեր դրամապանակը կամ պայուսակը: Գողերը կարող են նաեւ գողնալ թուղթեր եւ կարելու փաստաթուղթեր ձեր տունէն, ինքնաշարժէն, կղպուղ փոքր պահարանէն կամ նոյնիսկ ձեր աղբի եւ վերամշակման աղբարկղէն:

## ԱՌՏԱՆՑ (ONLINE) ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Առցանց (online) դրամատան գործերը եւ գնուճները կատարելը կ'աւելցնէ ձեր ինքնութեան գողութեան վտանգը: Ձեր տեղեկությունները կրնան գողցուիլ

համակարգիչէն: Շատ գոյշ եղէք երբ կը գործածէք հանրային համակարգիչներ որոնք կը գտնուին գրադարաններու եւ համակարգիչի խանութներու մէջ (computer labs): Միշտ դուրս ելէք ձեր ելեկտրոնային հասցէներէն (email) եւ ուեյ սայթերէն: Ուէր սայթերու վրայ մի պահէք ձեր գաղտնաբառերը (password) եւ ջնջեցէք ձեր փնտռելու ցանկը (search history):

- Մի պատահանէք ելեկտրոնային նամակներուն որոնց ուղարկողները չէք ճանչնար եւ որոնք կը խնդրեն ձեր անձնական տեղեկությունները:
- Մի բանաք լինքեր (link) ելեկտրոնային նամակներու մէջ որոնց ուղարկողները չէք ճանչնար:
- Մի վստահիք ելեկտրոնային նամակներու որոնք կ'առաջարկեն մրցանակներ, պարգէներ կամ արագ ձեւեր դրամ շահելու:
- Երբեք մէկու մը մի տաք ձեր գաղտնաբառերը եւ դժուար թող ըլլան ենթադրելու:
- Վերապահ եղէք eBay, Craigslist եւ Kijiji նման ուեյ սայթերէ գնուճներ ընելէն: մի փոխանցէք դրամ օտարներու:

## ԿԱՆՈՒՄԸ

Եթէ ձեր ինքնութիւնը գողցուած է շատ դժուար պիտի ըլլայ խնդիրը լուծել: Ձեր վարկը կ'արուի տարիներ, որը կը դժուարացնէ բջիջային հեռաձայնի թիւ ստանալ, վարկային քարդ (credit card) կամ նոյնիսկ գրաւի կալուածի դրամ (mortgage):

Գիտցէք ձեր հասարակական ապահովագրութեան թիւը պաշտպանելու մասին Service Canada-ի միջոցաւ, այցելեցէք [www.servicecanada.gc.ca](http://www.servicecanada.gc.ca) կամ [findlink.at/IS-SIN](http://findlink.at/IS-SIN)

Յաւելեալ տեղեկություններու համար ինչպէս պաշտպանել ձեր անձնական տեղեկությունները, այցելեցէք Օնթարիոյի կառավարական ուեյ սայթը [www.ontario.ca](http://www.ontario.ca) կամ [findlink.at/persinfo](http://findlink.at/persinfo)

## ՎԱՐԿԻ ՏԵՂԵԿԱԳՐԵՐ (CREDIT REPORTS)

Ձեր վարկի տեղեկագիրը կը հաւաքէ տեղեկություններ ձեր բոլոր դրամական գործերէն, ինչպէս պարտքի վճարումներ, վարկային քարդեր (credit card), հեռախօսային, ինթըրնետային հաշիւներ եւ ուրիշ հաշիւներ: Ուշացնել կամ չի կատարել վճարումներ կամ չի վճարել հաշիւներ պիտի ցածնէ ձեր վարկի մակարդակը: Սյս պիտի ազդէ ձեր կարողութեան ստանալու ապառիկ (loan) կամ գրաւով կալուածի պարտք (mortgage):

Աւելի գիտցէք վարկային տեղեկագրերու մասին Օնթարիոյի սպառողի պաշտպանութեան (Consumer Protection Ontario) ուեյ սայթին մէջ [www.ontario.ca](http://www.ontario.ca) կամ [findlink.at/credreport](http://findlink.at/credreport):



## Կարելու նշում

Եթէ կը կարծէք որ ձեր ինքնութիւնը գողցուած է, կարող էք խարդախութեան ազգանշան դնել ձեր վարկի տեղեկագրին մէջ, կապ պահելով հետեւեալ վարկի տեղեկագրութեան գործակալություններուն հետ: Equifax: 1-800-465-7166 եւ Trans Union: 1-877-525-3823



## Գիտելի ք թէ:

Սպառողները ունին պատասխանատուութիւնը իրենց հաշուեքարդը (debit card), վարկային քարդը (credit card), եւ անձնական ինքնութեան թիւերը (Personal Identity Numbers – PINs) պահպանելու: Պետք է տեղեկացնել կորսուած եւ գողցուած քարդերուն մասին, որպէսզի անոնք ի գործ ըլլալէ դադարին: Եթէ մէկու մը տաք ձեր անձնական ինքնութեան թիւը (PIN), դուք պատասխանատու կարելի է ըլլաք խարդախութեան հետեւանքներուն որ անոնք կ'ընեն:

